№ 145 ՕԳՈՍՏՈՍԻ 25 (ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6) 1878 ՕԳՈՍՏՈՍԻ 25 (ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6) № 145

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1878 թվից

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ՌՈՒՆԶԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ «Մշակի» մի առաջնորդող յօդուածի առիթով։ Նամակ Զարդախլուից։ Նամակ խմբագրին։ — Արտաքին տեսութիւն։ Աւստրօ-Ունգարիա։ Սերբիա։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։— Տեղեկացոյց։ — Բանասիրական։ Տեղեկագիրք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

Կատարեալ համակրութեան արժանի են «Մշակի» 139-որդ համարում գրված այն խօսքերը թէ «մեր հոգևորականութեան պարտականութիւնն է ուղարկել նոր նուաճված երկիրները հմուտ և եռանդոտ հայ հոգևորական միսիոնարներին։» Ոչ ոք չէ կարող ուրանալ թէ ոչ միայն Տաճկաստանում կան ամբողջ գիւղեր և գաւառներ որոնք լի են մահմետականացած հայերով, այլ նոյն իսկ Ռուսաստանի հպատակութեան ներքոյ գտնվող Հայաստանում շատ և շատ տեղեր կրօնափոխ եղած հայեր կան։ Նուշու մօտ Ղայպալիւշէն անունով գիւղի բնակիչների մէկ մասը թէև մահմետական են, բայց միշտ խօսում են հայերէն, և արդէն քանի մի ընտանիք վերադարձել են դրանցից նախնեաց կրօնքին։ Ղարաբաղի Տիզակ գաւառի Տոզ գիւղի տիրապետող Մելիք-Ասլանի ընտանիքը հիմայ էլ գիտեն և պատում են թէ որ թուին և ինչ պարագաներով մահմետական եղան։ Ահա այսպիսի օրինակներ ոչ թէ հարիւրներով, այլ հազարներով կան։

Եւրօպայի թէ հռօմէադաւան, թէ աւետարանական եկեղեցիների միսիոնարական գործունէութիւնը մեր հայ ազգին շատ սակաւ է յայտնի. կան այնտեղ և Ամերիկայում ընկերութիւններ որոնք միսիոնար-քարոզիչներ են պատրաստում Աֆրիկայի, Հնդկաստանի, Չինաստանի կռապաշտների համար, Տաճկաստանի և Պարսկաստանի մահմետականների համար, և Եւրօպայի և այլ տեղերի հրէաների համար։ Հարիւրներով գործաւորներ են ուղարկում այդ երկիրները, այդ անձանց բոլոր ծախքերը և նրանց առնելի գործերի նիւթական պարտաւորութիւնքն իրանց վրա առնելով։ Ճիշդ հիմայ գործում են Տաճկաստանում երկու հարիւրից աւելի ամերիկացի և անգլիացի միսիոնարներ, նոյնպէս գործում են նրանք և Պարսկաստանում։ Մանաւոր կերպով յայտնի է մեզ որ Դաւրէժի ժողովրդի մէջ գործող ամերիկացի քարոզիչները շատ աշխատում են որ եթէ հնար կայ անցնեն ռուսաց սահմանի այս կողմը և տարածեն տեղական մահմետականների մէջ քրիստոնէութիւնը։ Այդ դիտաւորութեամբ որ Անդրկովկասի և Պարսկաստանի տաճկախօս մահմետականները քրիստոնէութեան հետ ծանօթանան, Աստուածաշունչի ընկերութիւնը թարգմանել է բոլոր նոր կտակարանը մեր այստեղի թուրքերի լեզուով, որ կարելի է ստանալ Թիֆլիսում Աստուածաշունչի ընկերութեան մթերանոցում։ Նոյն իսկ «Մշակի» այն խօսքերը թէ՝ «Բայց եթէ մեր հոգևորականները այդ կողմից անհոգ կը լինեն, քրիստոնեայ ուրիշ դաւանութիւններին պատկանող միսիոնարները անպատճառ օգուտ կը քաղեն մեր հոգևորականների այդ անհոգութենից և կը գրաւեն մահմետականացած հայերին դէպի իրանց եկեղեցին, ամենևին սուսկ սպառնալիք չեն, որովհետև նրանք արդէն իրանց հետազօտութիւնները արել և եկել իրանց տեղերը բռնում են. օրինակի համար միստր Քօլ արդէն բռնել է Ղարս և այնտեղից պիտի սկսէ իր գործունէութիւնը։

Սակայն այս էլ հարկաւոր է ասել որ Եւրօպայի կամ Ամերիկայի այն մեծամեծ ընկերութիւնները որոնք իւրաքանչիւր տարի միլիոններ են ծախսում միսիոնարական գործի համար, բնաւ և երբէք հոգևորականների գործ չեն։ Այս տեսակ մի հատ ընկերութիւն չը կայ որ անմիջապէս եկեղեցու պատուղ լինի, այլ բոլորն էլ մասնաւոր անձանց ձեռնարկութիւններ են։ Այսինքն այս խընդրով հետաքրքրվող անձինք, ըստ մեծի մասին բարեպաշտ աշխարհականներ, ձգտելով օգնել անքրիստոնեայ ազգերին, մի մասնաւոր ընկերութիւն են կազմում որոշ կանոնադրութեամբ, նուիրում ու հաւաքում են ըստ կարողութեան տուրքեր և յետոյ հրաւիրում են կամ ձեռնադրեալ երէցներ կամ ձեռնադրելի յարմար աստուածաբաններ և ուղարկում իրանց ուզած երկիրները։ Այդ ընկերութիւնները ունեն իրանց կոմիտէները որոնք բաղկացած են հմուտ, գործնական և փորձված աշխարհականներից և նոյնպէս մի քանի հոգևորական անձինքներից, որոնք թէ սկզբունքների և թէ գործունէութեան նըկատմամբ համաձայն են առաջինների հետ։ Նրանց եկեղեցիները ոչ միայն չեն նախանձում և չեն խանգարում նրանց եռանդն ու գործը, այլ ամեն տեղ և ամեն կերպով աշխատում են նրանց աջակցել, առանց նրանց գործերին միջամտելու։ Բուն եկեղեցին ինքն միայն այն բանին է հոգ տանում, որ ձեռնադրվողները լինեն իրանց սրբազան պաշտօնին արժանի անձինք՝ թէ գիտութեան և թէ բարեպաշտութեան կողմից։

Հաւանական է որ մեր մէջ էլ այս մտքով հետաքրքրված անձանց ամենին անտարակուսելի երևի, որ մենք, եթէ միսիոնարութեան գործ ենք ուզում, պէտք է այն ուղղութեամբ և կերպով գործենք, ինչպէս վերև յիշած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ *)

Գաւառական հարստահարութեանց Կ. Պոլիս 1876 թ.

(Պաշտօնական հրատարակութիւնք ազգային պատրիարգարանի)

—

Անցեալ տարվայ վերջին ամիսներում Կ. Պոլսում հրատարակվեցաւ յիշեալ վերնագրով մի գրքոյկ, որ բովանդակում է իր մէջ Ասիական Տաճկաստանի հայ ազգաբնակութեան վերաբերութեամբ կատարված գաւառական հարստահարութիւնները։ Դա մի պաշտօնական հրատարակութիւն է, որ դուրս է բերված Կ. Պոլսի պատրիարգարանի արձանագրութիւններից և 1876 ամի սեպտեմբերի ներկայացրած է տեղային Ազգային ժողովին։

Վարագոյրը բարձրացաւ, այժմ մենք գիտենք, թէ ինչ է կատարվում բեմի վրա....

Մինչև այսօր մենք խիստ աննշան տեղեկութիւններ ունէինք Կ. Պոլսի պատրիարքարանի, այլ խօսքով, ազգային սահմանադրութեան գործունէութեան վրա։ Մինչև այսօր մենք համարեա չը գիտէինք թէ Կ. Պոլսի հայոց ազգային վարչութիւնն որ աստիճան նշանակութիւն ունի Բ. Դրան առջև, և որ աստիճան ձեռնհաս է նպաստելու արտաքսիական գաւառացիների գործերին։ — Ցիշեալ «տեղեկագիրքը» տալիս է մեզ թէև շատ տխուր, բայց հետաքրքրական տեղեկութիւններ։

«Տեղեկագիրքը» բաժանված է երկու մասն։ Առաջին մասը պարունակում է իր մէջ գաւառական հարստահարութիւնների ամբողջ 20 տարվայ արձանագրութիւնների հաւաքածուն և ունի այսպիսի վերնագիր՝ «Ա. Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց առ Բ. Դուռն յանուն ազգային ժողովոյ ի 11 ապրիլի 1872։» Տեղեկագիրը ունի կնիք և ստորագրութիւն այս անունով՝ պատրիարգ Կ. Պոլսի Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան։

Ցիշեալ տեղեկագրի բովանդակած խնդիրները, որպէս ասացինք, դուրս են բերված պատրիարգարանի 20 տարվայ արձանագրութիւններից և հասնում են մինչև 1872 ամի ապրիլի 11-ը։ Իսկ երկրորդ տեղեկագիրը ունի այսպիսի վերնագիր. «Երկ. Տեղեկագիր գաւառական հարստահարութեանց ի խորհրդարանական յանձնախմբէ առ Ազգային ժողովն։»—Դա պարունակում է իր մէջ 1872 թուից սկսալ մինչև 1876 սեպտեմբերի 1-ը, այսինքն 5 տարվայ ընթացքում կատարված հարստահարութիւնների արձանագրութիւնները։ Ասել է թէ, ամբողջ տեղեկագիրը ներկայացնում է պատրիարքարանի 25 տարվայ գործունէութիւնը։ Թէ ինչ չափով և որքան թուով բողոքներ է ստացել պատրիարգարանը գաւառներից այս 25 տարվայ ընթացքում, յայտնի չէ. յայտնի է միայն, որ 57 զանազան խնդիրների մասին նա պաշտօնական բանակցութիւն է ունեցել Բ. Դրան հետ։ Դա շատ փոքր թուանշան է, ի նկատի ունենալով այն բազմաթիւ անիրաւութիւնները, որ կատարվում են ասիական Տաճկաստանում, այն ևս 25 տարվայ ընթացքում։

Ընթերցողին փոքր ինչ գաղափար տալու համար թէ ինչպիսի հարստահարութիւններ են կատարվում ասիական Տաճկաստանում, հարկաւոր ենք համարում ծանօթացնել թէ առաջին և թէ երկրորդ տեղեկագրի բովանդակութեան հետ։

Առաջին տեղեկագիրը պարունակում է իր մէջ հետևեալ խնդիրները։

1) Օրէնք և արդարութիւն գործ դնելու մէջ գաւառական պաշտօնակալները ընդհանրապէս անփոյթ և անտարբեր են մնում։ Եւ իրանց կամայականութեանը հետևելով, իրանց հաճոյքի համեմատ զեղծանում են բարձրագոյն հրամանագրները հարստահարութիւնները բառնալու և հարստահարիչները պատժելու մասին։

2) Գաւառական Արքունի ժողովները թէ շքիլաթի *) օրէնքով կազմվելով, չար և չահախնդիր անձանց մենավաճառութեան ասպարէզ են դառնում։

3) Գաւառացի հայը, մահմետականների մոլեռանդութեան ենթակայ լինելով, միշտ նախատինքի թշնամանաց և անպատուութեան առարկայ է դառնում։

4) Արքունի շինուածքների համար հայերին ձրի աշխատեցնում են, և ով որ աշխատելու անկարող է, դրամական անիրաւ պահանջմունքի են երթարկում։

5) Ճանապարհների շինութեան համար հայերին նոյնպէս ձրի աշխատեցնում են, և կամ այս պատրուակով նրանց կեղեքում են։

6) Կապալառուները (մուլթէզիմ) փոխանակ բերքի տասանորդը ստանալու, բռնադատելով, նրա տեղը զուտ արծաթ են առնում։

7) Նմանապէս իր ընտանիքի ուտեստի համար տան պարտէզի մշակած բերքից ստիպեցնում են տասանորդ վճարել։

8) Բերքից ստացած տասանորդը գիւղացիներին ստիպեցնում են կապալառուի չտեմարանը փոխադրել։

9) Կապալառուն դիտմամբ իր ժամանակին չը գալու համար, բերքը անձրևի տակ մնալով փտում է (որովհետև գիւղացին իրաւունք չունի վեր առնել առանց տասանորդը վճարելու)։ Եւ յետոյ փտած բերքի տասանորդի փոխարէն ողջի արժէքով զուտ արծաթ է առնում։

10) Գիւղացին պարտաւորվում է կապալառուին և նրա գործակալներին իր տան մէջ հիւրասիրել և ձրիաբար կերակրել։

11) Կապալառուները, երբեմն եղների լուծերի վրա հաշվելով, տասանորդի անունով ապօրէն և աւելորդ ցորեան են առնում գիւղացիներից։

*) «Այս յօդուածը դեռ ևս 1877 ամի 10-ին յունվարի ուղարկել էինք «Փորձի» մեծ. խմբագրին, բայց նա իրան միայն հասկանալի պատճառներով թողել էր անտիպ։ Մենք ստիպվեցանք յետ ստանալ։ Այժմ, թէև փոքր ինչ հնացած, հրատարակում ենք ցոյց տալու համար Տաճկաստանի հայոց թշուառ դրութիւնը մի կողմից և «Փորձի» ուղղութիւնը նրանց դրութեան վերաբերեալ միւս կողմից։

*) Մի տեսակ դատարանի կազմակերպութիւն խառն մահմետականներից և ոչ մահմետականներից կոչվում է թէշքիլաթ, ուր իսկապէս ոչ-մահմետականները միայն ձևի համար ընտրված կամ կոչված են լինում։

ընկերութիւնները։ Մեր ազգային եկեղեցին պէտք է մեծ յօժարութեամբ նպաստէ այնպիսի հայ ընկերութեան, որ մեզ շրջապատող մահմետականների մէջ քրիստոնէութիւն քարոզելու պատուական պարտականութիւնը կը յանձն առնէ։

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԶԱՐԴԱԽԼՈՒԻՑ

10 օգոստոսի

Մօտ օրերումս անձնական գործերով գնացել էի Գետաբեկ գիւղը, որ Զարդախլուից հեռու է 20—25 վերստով արևմտահարաւային կողմում։ Գիւղը ունի 20—25 հայ ընտանիք, որոնց հովւում է Փիփ գիւղի քահանան. ունէ մի բազմադարեան փոքրիկ եկեղեցի, որ գտնվում է գիւղից փոքր ինչ հեռու պղնձէ հանքի գործարանի մօտ։ Ես չոքից սաստիկ նեղացած լինելով, չը կարողացայ չրջել և գործարանի մեքենաները նայել, միայն գործարանի գերեզմանական լռութիւնը առիթ տուեց ինձ հարցնելու իմ բարեկամ պ. Զ. Մ-ին, որը այնտեղ վաճառական է դորա պատճառը։ Բարեկամս ասաց. «երկու ամիս է, որ գործարանում ոչինչ համարեա գործ չէ կատարվում, որովհետև ածխարարները, պ. դիրեկտորի խստաբարոյութենից և ժլատութենից զզուած լինելով, չեն կամենում ածուխ վաճառել։ Մշակները և արհեստաւորները որոնք մի քանի տարի առաջ, նախորդ դիրեկտորի ժամակ 600—700 էին համարվում, այժմ համարեա թէ 100-ի չափ հաղիւ են գտնվում, որովհետև իւրաքանչիւր մշակ ստանում է, բացի ուտելիքից, ամենանուազը 1 ռուբլի։ Արհեստաւոր դասն էլ, թէև փոքր ի չատէ լաւ է վարձատրվում, դարձեալ պ. դիրեկտորի վարվողութենից զզուած, «մնաս բարով» է ասում։ Վերջապէս այժմ գտնված բոլոր թէ արհեստաւորները և թէ մշակները յայտնել են պ. դիրեկտորին, որ մինչև 10—15 օրը իրանց հաշիւը վերջացնէ, որ գնան իրանց տները։ Վաճառականութիւնը, որ չափազանց աչող դրութեան մէջ էր, այժմ բոլորովին կորված է։ Սրանից դեռ երկու երեք տարի առաջ գանձակեցոց նախանձը շարժում էր տեղիս վաճառականութիւնը. շատերը կամենում էին խանութ ունենալ Գետաբեկում, ինչպէս և մի քանիներն էլ արին, իսկ այժմ ամեն մի վաճառական, ամեն մի արհեստաւոր զզուած՝ կամենում է իր խանութը փոխել ուրիշ տեղ։ Ահա ինչ է սպասում պղնձէ հանքին և վաճառականութեանը, շնորհով պ. դիրեկտորի։»

Ս. Տէր-Միքայէլեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 17 օգոստոսի

(Շարունակութիւն և վերջ)

11) Գանք այժմ Սղնախ և Թէլաւ ճանապարհորդութեանս։ Պ. Մ. Մ. ասում է որ ես կանխապէս այդ քաղաքների դպրոցներից ճանապարհածախս 121 ր. ստացել եմ։ Հարկաւոր է յիշել այստեղ, որ իմ նախորդս ճանապարհածախս ստանում էր այն ուսումնարանից, ուր նա գնում էր, ինքն անմիջապէս պահանջելով ամեն մի տեղի դպրոցի հոգաբարձութիւնից փողերը։ Երբ նորին բարձր սրբազնութիւն թեմական առաջնորդը նշանակեց ինձ թեմական վերատեսուչ, ես հէնց առաջին անգամից խնդրեցի նրանից, որ ազատէ ինձ առաջվայ կարգից, որ միանգամայն վեմ պաշտօնին անվայել բան է, սրա համար գերապատիւ առաջնորդը՝ միանգամայն համակրելով այս մտքին, հրամայեց կոնսիստորիային, որ ինչպէս տարեկան ռոճիկը (800 ր.), այնպէս և ճանապարհածախսը հաւաքվի կոնսիստորիա, իսկ թեմական վերատեսուչը ամսէ ամիս ստանայ թէ ռոճիկը և թէ ճանապարհածախսը կոնսիստորիայից։ Նշանակած երեք հարիւր ր. տարեկան ճանապարհածախսը կոնսիստորիան մասնադրեց համեմատաբար մի քանի հարուստ ուսումնարանների վրա։ Թէ որ ուսումնարանից են ստանում և ինչքան՝ այդ ես ոչ գիտեմ և ոչ էլ կարևոր է իմանալ, իմս միայն ուսումնարաններն այցելելն է անխափար ըստ կարողութեան, իսկ թէ Սղնախից և Թէլաւից 121 թէ 500 ր. է ստացվել կոնսիստորիայում, ինձ համար դա ողջը մէկ է։ Եթէ պ. Մ. Մ-ի ասածի նման վարվէինք, այն ժամանակ Ախալքալաքի, Սուրմի, Քութայիսի, Դիլիջանի և այլն և այլն ուսումնարանները չը պէտք է այցելեմ, որովհետև գոցանից չէ պահանջվում ոչ մի կօպէկ թեմական վերատեսչի ճանապարհածախսի համար։—Պ. Մ. Մ. ասում է որ ես ուրբաթ երեկոյ եմ մտել Սղնախ, շաբաթ ճաշից յետոյ դուրս եկել՝ և ուրիշ շատ բաներ է գրում։ Եթէ այդ ճանապարհորդութիւնս հետաքրքիր է նրան, պատրաստ եմ ճշմարտութիւնը վերականգնելու համար այդ ես պատմել։ Թիֆլիսից դուրս եմ եկել ղէպի Սղնախ 1877 թ. ապրիլ ամսին (ամսաթիւը միտս չէ), երեքշաբթի առաւօտ, գիշերը կացել եմ Լեակոբինսկայա ասած կայարանում, այդ տեղից չորեքշաբթի առաւօտ ժամի 5-ին դուրս եմ եկել և հասել Սղնախ նոյն առաւօտեան ժամի 8-ին, ամբողջ չորեքշաբթին, հինգշաբթին, ուրբաթ և շաբաթ օրերը գործ եմ դրել Սղնախի և Թէլաւի ուսումնարանների այցելութեան վրա։ Եթէ պ. Մ. Մ. չը հաւատայ սորան, կարող է դիմել նախ Թիֆլիսի, ապա Լեակոբինսկայի, յետոյ Սղնախի և վերջը Թէլաւի փօստի կայարանները, պահանջէ այն ժամանակվայ մատեանները, որտեղ գրվում են թէ ինչ օր և ժամի քանիսին այս կամ այն ճանապարհորդին ձիաներ են տուել (եթէ կամենայ կարող է եամշիկի, ձիավարի, անունն էլ իմանալ) (?), այն ժամանակ կը համոզվի իմ խօսքի ճշմարտութեան մէջ։

12) Դարձեալ պ. Մ. Մ. գրում է, իբր թէ Թէլաւի դպրոցները չեմ տեսել։ Պ. Մ. Մ. գոնէ տեղեկութիւններ հաւաքէ և ապա գրէ։ Թէլաւի դպրոցների թէ աշակերտներին և թէ աշակերտուհիներին անձամբ քննել եմ, հոգաբարձութեան մատեանները զննել և այլն և այլն, կարող է այս ամենի մասին Թէլաւի հոգաբարձութենից տեղեկանալ։—Դիլիջանի վերաբերութեամբ պ. Մ. Մ.-ին աւելորդ եմ համարում պատասխանել։ Պ. Մ. Մ. գրում է, որ ես եղել եմ միայն Սղնախ, Թէլաւ, Դիլիջան, Քարվանսարա, Շուլավէր, Գանձակ և Ախալցխա, իսկ Գօրին, Սուրամը, Քութայիսը, Ախալքալաքը և այլն լռութեան է տալի, որտեղի ուսումնարաններում օրերով և շաբաթներով լինելս, անձամբ հարցաքննութիւններ անելս առաւօտեան ժամի 8-ից սկսած մինչև 2-ը և ճաշից յետոյ 5 մինչև 7-ը կը վկայեն այդ դպրոցների տեղական վարչութիւնները։ Սրա ապացուցութիւն պ. Մ. Մ.-ին կառաջարկէի անցեալ տարվայ «Մշակի» յունիս կամ յուլիս ամսի համարները վեր առնէ և կարդայ թէ ինչ են գրում Գօրուց, Սուրամից և այլն և այլն, իմ այնտեղ լինելու և քննութիւնները անելուս համար։

13) Թեմական վերատեսչի անհոգութիւնից չէ, որ մի քանի ուսումնարանների մէջ սեղանները, նստարանները, գրատախտակները և այլն հին են. դա մեր շատ դպրոցների խեղճութիւնից է։ Ո՞ր գումարից և գանձարանից կը հրամայէք, որ թեմական վերատեսուչը տնօրինէ նոր ձևի նստարաններ, գրատախտակներ չինելու։ Դեռ պէտք է չնորհակալ լինել՝ որ պահպանվում են այդ դպրոցները, եթէ որ ամեն տեղ ուսումնարանի գոյութիւնը նոր աթոռներից, նոր սեղաններից ու նստարաններից կախումն ունենար, այն ժամանակ ոչ թէ միայն ինձ յանձնված. այլ բոլոր թեմերի հայոց ուսումնարանների մեծ մասը պէտք է փակէինք, այլ և Ռուսաստանում եղածների շատերն ևս։ Ոչ, ես այդպէս չեմ մտածում, թող լուսաբեռներով փայտ գնեն դպրոցները և ոչ սայլերով ու սաժէններով, միայն թէ ուսումն լինի, գոնէ կարդալ—գրել կը սովորեցնենք։

14) Պ. Մ. Մ. ասում է թէ իբր ես արժանապատիւ նախորդիս պրօգրամը չեմ ընդունում և նորա անունը վատաբանում։—Այս տեսակ զրպարտութիւնները ցրելու համար հարկաւոր եմ համարում կարճօրէն պատմել իմ և նախկին թեմական վերատեսչի մեջ եղած յարաբերութիւնները և պրօգրամի կազմելը *)։—Մեր յարաբերութիւնները Տէր-Ստեփան հօր հետ միշտ եղել են ամենասիրտ բարեկամական, իսկ պրօգրամի կազմելուն մէջ ունեցել եմ ես ևս մասնակցութիւն և ահա ինչպէս.

1874 թ. ես տեղական լրագրութեան մէջ իբրև մի մասնաւոր անդամ հասարակութեան գրեցի մի քանի յօդուածներ ընդհանուր ուսուցչական ժողովներ կազմելու մասին, ցոյց տալով դրանց օգուտը և կարևորութիւնը մեր ուսումնարանների համար։ Այդ յօդուածները կատարելապէս հասան իրանց նպատակին և նախկին թեմական վերատեսուչը 1874 թ. օգոստոս ամսին կազմեց այդ ժողովը։ Ես այդ ժամանակ գտնվում էի Մանգլիս ամարանոցում։ Այդ ժամանակ ստացայ արժ. Տէր-Ստեփանեանցից հետևեալ նամակը։ «Արգոյ բարեկամ, Տէր-Յովհաննիսեան. Ձեր ցանկութիւնը ահաւասիկ կատարվում է մօտ օրերումս։ Ես ձեզ խոստացայ գումարել ուսուցչական ժողով, եթէ որ ուսուցիչները յանձն կառնեն իրանց ծախսով Թիֆլիս գալ։ Շնորհակալ եմ, որ նրանք իմ առաջարկութիւնը ընդունելով եկան Թիֆլիս և ներկայ կը լինեն ժողովին, որ ամսիս 7-ին կը բացվի բ. սրբազան առաջնորդի ներկայութեամբ Ներսիսեան դպրոցի դահլիճում, իսկ ամսիս 5-ին երեկոյեան 6 ժամին սրբազանի մօտ նշանակված է մասնաւոր ժողով նոյն առարկայի վերաբերութեամբ։ Ձեր ներկայութիւնը շատ հարկաւոր է, ուստի կը խնդրեմ, եթէ հնարաւոր է գալ Թիֆլիս այս ուսուցչական ժողովին մասնակցելու, ինչպէս խոստացած էք նաև պ. N. N-ին։ Խ. Ծ. Ստեփաննոս քահանայ Տէր-Ստեփանեանց։ Ի 4 օգոստ. 1874. Թիֆլիս։»

Նոյն նամակի մէջ գրած է և պ. N. N-ի նամակը հետևեալ բովանդակութեամբ։ «Ցակոբ, Սպասում ենք քեզ, իբրև սկզբնապատճառի այն ուսուցչական ժողովի, որ պիտի տեղի ունենայ շուտով։ Գիտես, որ որքան էլ թերի լինի, կարող է մեծ օգուտներ ունենալ, ուրեմն....և այլն քո N. N.» Այս նամակները պարզ ցոյց են տալի թէ ինչ բարեկամական յարաբերութիւն եմ ունեցել արժ. Տէր-Ստեփանեանցի հետ և թէ ինչ դեր եմ խաղացել ուսումնարանական գործի մէջ դեռ ես մասնաւոր անձն լինելով։ Զը նայելով հիւանդութեանս, վեր եմ կացել Մանգլիսից եկել Թիֆլիս ամարային անտանելի չոքերին և մասնակցել ժողովին։ Այդտեղ կազմվեցաւ և մասնաժողով տասն անձինքներից պրօգրամ չինելու համար, անդամներից մինն էլ ես էի, ուրեմն և պրօգրամի կազմելու մէջ մասնակցել եմ և ես։ Որտեղից է վեր առնում պ. Մ. Մ., որ այդ պրօգրամը ես չեմ ընդունում, ամենևին չեմ հակասում։—Թող այս ևս իմանայ Մ. Մ., որ

*) Սրա մասին մանրամասն ընթերցողը կարող է գտնել «Մանկավարժական թերթի» № 2 «Ուսուցչական ժողով» յօդուածի մէջ։

---

12) Բացի կապալառուների յիշեալ հարստահարութիւններից, գաւառացի հայերին բռնաբարում են վճարել մշակութիւնների համար չահնալը գ և օլչէք-հագը կոչված արդելեալ տուրքերը *)

13) Զինուորական տուրքից՝ մեռնողների, գաղթողների և փախստականների մասը՝ հարկադրում են մնացողներին վճարել։ *)

*) Գիւղացի հայերի գլխաւոր հարստահարիչները լինում են կապալառուները։ Որովհետև գաւառական պաշտօնակալները մշակութեանց բերքերի տասանորդի վճարը կապալով են տալիս ըստ մեծի մասին իրանց բարեկամներին կամ մերձաւոր մէկին, և իրանք գաղտնի կերպով նրանց հետ ընկերանում են։ Երբ որ բերքը ծախվում է, լաւ գին ունի, կապալառուն տասանորդը ստանում է առաւելութենով, իսկ երբ որ բերքը գին չունի, նա թանգ գնահատելով, փողն է ստանում, որ ամենևին իրաւունք չունի։ Բայց գիւղացին ստիպված է խոնարհվել կապալառուի բռնութեանը, որովհետև եթէ հակառակվի, կապալառուն նրա մշակութեան կալը երեսի վրա կը թողնի, ձիւնի և անձրևի տակ կը փտեցնէ, այն ժամանակ աւելի իրաւունք կը ստանայ տասանորդի կրկնակի արժէքը արծաթով առնելու, որովհետև բերքը փչացած է։ Եւ տեղային կառավարութիւնը համբերում է կապալառուի բռնակալութեանը, որովհետև ինքն էլ նրա չահերին ընկեր է։—Իսկ օլչէք-հագը նշանակում է չափելու վարձ, չահանալը գ նշանակում է արքունական։

*) Ցաճկաստանում հայերը որովհետև զինուոր չեն տալիս, նրա փոխարէն վճարում են մի տուրք, որ կոչվում է բէդէլ (փոխարէն)։ Այս տուրքը որոշվել է ստանալ հետևեալ եղանակով.—180 արու անձանց վրա մի զինուոր հաշվելով, նրա փոխարէն պէտք է ստացվի զուտ փող 5000 ղուրուշ (300 ռուբլի)։ Այս վճարին մասնակից լինելու բաշխումից դուրս պէտք է

14) Կալուածական և քաղաքական տուրքերի անարդար բաշխման պատճառով մահմետականների բեռը հայերն են կրում։

15) Տուրքերի վճարման պատճառով՝ տնային անհրաժեշտ կահ-կարասին, — երկրագործական պարագայքը և մինչև անդամ բանուոր անասունները—ծախելու են ստիպում, և ոստիկանութեան ձեռքով ծեծելու, բանտ դնելու խստութիւններին են ենթարկում չքաւոր ժողովուրդը։

16) Կիները և անչափահաս մանուկները բռնաբարվում են մահմետական կրօնը ընդունելու։

17) Ոչ—մահմեդականների վկայութիւնը չընդունվելով, մահմետականների հայերի վերաբերութեամբ կատարած առևանգութիւններն, գողութիւններն և սպանութիւններն մնում են անպատիժ։

մնան՝ 15 տարեկանից ցած և 75 տարեկանից վեր անձինք, նաև կղերականներն, աղքատ ու բոլորովին անկարող մարդիկը, և այն անձինքը, որ անյայտացած են։ Բայց տէրութեան հարկահանները, յիշեալ բացառութիւնները ամենևին նկատի չառնելով, և իրանց կամայականութիւնը միայն գործ դնելով, ժողովրդին տուժել են տալիս, որքան և կարողանում են։ Թողեալ այդ, մահմետականը, որ զինուոր է տալիս, վայելում է այդ մասին ինչ—ինչ բացառիկ արտօնութիւններ և առանձնաշնորհութիւններ։ Բայց հայը, որ զինուորի փոխարէն արծաթ է վճարում, զուրկ է այն արտօնութիւններից, որ ունի զինուոր տուող մահմետականը։ Եւ ի նկատի ունելով այնքան բազմաթիւ գաղթականները ասիական Ցաճկաստանից, հասկանալի է, թէ որքան կը ծանրանայ մնացած ժողովրդի վրա զինուորական տուրքը. որովհետև դա ստացվում է ազգահամարի հաշվով։

18) Զինեալ քրդերի, լեռնաբնակ ցեղերի, չէրքեզների և ընիկ թուրք դէրէբէկիների (ինքնիշխան բռնակալ) այլ և այլ հարստահարութիւնների ներքոյ հայ ժողովուրդը տանջվում է և կեղեքվում է։

19) Կիները, հարսները, այլ և կոյս աղջիկներ առևանգվելով բռնաբարվում են։

Ահա սրանք են առաջին տեղեկագրի խնդիրներն, որ մինչև 1872 թուականը ամբողջ 20 տարվայ ընթացքում Պատրիարգարանի և Բարձ. Դրան մէջ պաշտօնական բանակցութեան նիւթ են դարձած եղել։ Բայց Դուռը ինչ հոգացողութիւններ է արել հարստահարութիւնները բառնալու համար։

Այս մասին մենք առաջ կը բերենք յանձնաժողովի նկատողութիւնը, որ պատրիարգարանի արձանագրութիւններից առնելով, հաղորդում է ազգային ժողովին. «Ցիշեալ տեղեկագրի մատուցած թուականէն ի վեր (11 ապրիլ 1872) հարստահարութեանց համար պատրիարքարանէն գրուած թագրիրներն (բողոքագիր) ալ, ինչպէս կերևին ձեր յանձնախմբի պատրաստած հաւաքածոյէն, կամ պաթթալ ըլլալով (առանց հետևանքի թողնելով, ոչնչանալով) կամ անպատասխանի թողնվելով, և իսթիլամի *) ապարդիւն դրութեամբ յետաձգվելով, և առ առաւելն կենտրօնական կառավարութենէն առ գաւառականս ուղղեալ հրամանագրաց անգործադրելի մնալովը՝ մոռացութեան մէջ թողված են, առանց դարման տանելու ժողովրդեան կրած տառապանաց։»

Ցանձնաժողովի այս նկատողութիւնը մեր լեզուով կը պարզենք այսպէս.—Մինչև 1872 թուականը 20 տարվայ ընթացքում, պատրիարգարանը գաւառներից զանազան տեսակ հարստահարութիւնների մասին գանգատներ է ստանում, և իր բողոքագրերով (թագրիրներով) հաղորդում է Բարձ. Դրանը և բաւականութիւն է խնդրում, Բարձ Դուռը պատրիարգարանի բողոքները կամ թողնում է առանց հետևանքի, կամ պատասխանի չէ արժանացնում, կամ եթէ ընդունում է և իր կողմից հրամաններ է գրում, այն ժամանակ գաւառական պաշտօնակալներն բարձրագոյն հրամանագրերը թողնում են առանց հետևանքի։ Եւ այսպէս, ժողովրդի վիճակը միշտ մնում է թշուառութեան մէջ... և պատրիարգարանի բողոքներից ոչ մէկը իր նպատակին չէ հասնում....

(Կը շարունակվի)

*) Գաւառական հարստահարութեանց մասին մատուցած մի բողոք, շատ անգամ Բարձ. Դուռը դարձնում է նոյն գաւառի կամ նահանգի կառավարչին ստուգելու կամ վերաքննելու համար. դա մի խորամանկ ձեռնարկութիւն է բողոքարկուները ստելու համար։ Որովհետև երբէք գաւառական կառավարիչները չեն ցանկանայ արդարացնել բողոքողներին այն մեղադրանքների մէջ, ուր իրանք դատաւորներն շատ անգամ խառն են լինում։ Իսթիլամը մի այսպիսի բան է։ Նա կատարվում է առաւելապէս գործը երկարացնելու և վերջապէս մոռացութեան սընտուկի մէջ ձգելու համար։

նոյն իսկ արժ. Տէր-Ստեփանեանցը առաջին անգամ ինձ միտք տուեց ու համոզեց թեմական վերատեսչութիւնը ընդունել և ինքն էր, որ առաջարկեց ու վկայեց ինձ համար դերապատիւ առաջնորդին։ Ես միշտ յարգել եմ և յարգում եմ արժ. նախորդիս մեր ծանօթութեան օրից սկսած մինչև ցայսօր։ Ուրեմն ինչից ստիպված ես պէտք է վատաբանեմ իմ բարեկամիս և չընդունեմ պրօգրամը, որի կազմելու մէջ ինքս եմ մասնակցել։

Ինչ կը նշանակէ ղուրղուռ կամ միկիտանի սեղան՝ մենք չենք հասկանում. դա երևի պ. Մ. Մ-ին հասկանալի կը լինի։

16) Մէկ երկու խօսք ևս «Մշակի» խմբագրութեան կողմից գրած «Երկու նամակի առիթով» յօդուածի մասին։

Մենք կարծում ենք, որ ամեն մի ազնիւ խմբագիր իրան չը պէտք է թոյլ տայ, երբ դեռ ևս չարունակում են գրել մի անձնաւորութեան վրա, իր կողմից որ և է կարծիք յայտնել դորա մասին։ Դա ազնուութիւն չէ «Մշակի» խմբագրութեան կողմից սկզբից ճնշումն տալ այս կամ այն կողմը, ինչպէս որ արաւ նա երեք աստղ ստորագրված յօդուածովը։ Մենք արդէն հասկացանք, որ «Մշակի» խմբագրութեանը հարկաւոր են Մարտիրոս—Մկրտչի նման անձանց յօդուածները, դրա պարզ ապացուցութիւն ընթերցողը կարող է տեսնել «Մշակի» № 136-ում խմբագրութեան կողմից գրած առաջարկութեան մէջ։ Զարմանալի բան է. պ. խմբագիր, ինչու է քո սովորեցնում հասարակութիւնը եղուիտութեան, խստանալով նամակագրողներիդ անունները գաղտնի պահել։ Աւելի լաւ չէիք անի, եթէ Մարտիրոս—Մկրտչեանին յանձնէիք պահանջած նամակները չարադրելու և այնուհետև ստորագրել տայիք զանազան կեղծ անուններով, չէ որ «Մշակը» ձեր սեփական օրգանն է։ (Ինչ սրամտութիւն)։

Սորանով վերջացնում եմ նամակս, յայտնելով, որ այսուհետև այդ տեսակ զրպարտիչ և լի ստութիւններով նամակներին ոչ մի տող պատասխան չեմ տայ. ի զուր տեղը ժամավաճառ չը լինելու և այդպիսի ապարդիւն (?) և գործին անօգուտ աշխատանքով չը զբաղվելու համար։

Ես իմ գործը կը չարունակեմ այնպէս, ինչպէս տարել եմ և տանում եմ, ամենևին ուշադրութիւն չը դարձնելով (?) երևելի նամակագրողների յօդուածներին։

Թեմական վերատեսուչ Յակոբ Տէր-Յովհաննիսեան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Վիէննայի լրագիրները հաղորդում են հետևեալը։

«Աւստրիական մի քանի զօրաբաժինների Բօսնիայում և Հերցեգովինայում ունեցած ժամանակաւոր անաջողութիւնները, մանաւանդ գեներալ Սապարիի զօրաբաժնի դէպի Դօբոյ յետքաշվելը Վիէննայի զանազան շրջաններում ծանր տպաւորութիւն գործեցին։ Մանաւանդ անհանգստացնում է այն հանգամանքը, որ եթէ գեներալ Սապարի շուտով օգնութիւն չը ստանայ, նա կարող է ապստամբների նոր յարձակման ենթարկվել, կորցնել իր ամրացած դիրքերը և այդպիսով գեներալ Ֆիլիպովիչի զօրքերի յետ քաշվելու գիծը անփախչելի վտանգի մէջ կը լինի։ Միևնոյն հասարակութեան մէջ տարածված են այսպիսի անհանգստացնող լուրեր և մամուլն էլ նրանց հաստատում է, գործի հետ ծանօթ շրջանների մէջ վերջին անցքերի վրա նայում են բոլորովին այլ տեսակէտից։ Գեներալ Սապարիի յետքաշվելը այդ շրջանների մէջ համարում են մի այնպիսի անաջողութիւն, որ անփախչելի է մինչև անգամ ամենափառաւոր պատերազմի ժամանակ։ Որովհետև նոր զօրքեր են պատրաստվում, որոնք պէտք է օգնութեան հասնեն գեներալ Սապարիին, այդ պատճառով յիշեալ շրջաններում համոզմունք են կազմել, որ պատերազմը աջողակ հետևանքներ կունենայ և որ Սապարի, օգնութիւն ստանալուց յետոյ, յաղթանակով կը շարունակէ իր ժամանակաւորապէս ընդհատված ճանապարհը և վերջնական հարուած կը հասցնէ ապստամբներին։ Խաֆիզ-փաշայի այն խոստովանութիւնը, որ թիւրքաց կանոնաւոր զօրքերի երեսուն բատալիոններ կռուում էին ապստամբների կարգում, Աւստրիայում շատ վատ տպաւորութիւն գործեց և Վիէննայի բնակիչներին չափազանց զրգռեց Բ. Դրան դէմ։

«Վիէննայում կարծում են, որ բօսնիացիների ընդդիմադրութիւնը աւստրիական զօրքերին, սկսելով Հաջի-Լայայի ապստամբելուց մինչև ամենավերջին կռիւը, այդ բոլորը մտածված և նախագծված է Կ. Պոլսում և կեղծաւորութեամբ վերաբերված է բօսնիացիների անհնազանդ ոգուն։ Հասարակութեան մէջ աւստրօ-թիւրքական դաշնադրութեան մասին շատ լուրեր կան տարածված, մի բան միայն հաստատ կարելի է ասել, որ Բ. Դրան գաղտնի թշնամական գործողութիւնները այնպէս փոփոխեցին երկու պետութիւնների մէջ եղած յարաբերութիւնները, որ մի քանի ամիս առաջ անհերևակայելի էր։»

«Голосъ» լրագրի թղթակիցը Վիէննայից գրում է հետևեալը։ «Ով չէ յիշում այն ժամանակները, երբ Աւստրիայի մամուլը վրդովված էր Ռուսաստանի մամուլի դէմ, որովհետև ռուս լրագիրների մէջ զանազան մեղադրանքներ էին տպվում թիւրքերի դէմ, նոքա հակառակ էին ռուս լրագիրների այն կարծիքին, որ Թիւրքիան խոնարհվում է միայն բռնի ոյժի առաջ։ Այժմ աւստրիական մամուլը անամօթութեամբ նոյն է տպում ինչ որ առաջ ռուս մամուլը և ինչի դէմ նա բողոքում էր։ Այժմ ոչ թէ միայն Աւստրիայի լրագիրները, այլ և դիպլոմատիական շրջանները Թիւրքիայի ասիական կանոնների և իսլամի գոյութիւնը եւրոպական լուսաւորութեանը և կուլտուրային անմատչելի են համարում։

«Ունգարացիների ինքնասիրութիւնը չափազանց խոցված է։ Իրանք չեն հասկանում ինչ են խօսում, մի խօսքով Ունգարիայում շունը տիրոջը չէ ճանաչում։ Նոցա բարեկամները, Թիւրքերը, փոխանակ նրանց բաց դռներով ընդունելու, նրանց հանդիպում են մերկացրած սրերով, գուցէ նոյն սրերով, որոնց նրանք այդպիսի առատութեամբ ընծայ էին տանում Թիւրք փաշաներին բուլգարներին և սերբերին տուած ջարդը վարձատրելու համար։

«Սլավոնական և գերմանական գունդերը սլավոնացի Ֆիլիպովիչ և Իովանովիչ զօրապետների առաջնորդութեամբ յաղթանակով առաջ են ընթանում, քաղաքներ են վերցնում, իսկ ունգարացի գունդերը, ունգարացի զօրապետ Սապարիի հրամանատարութեան տակ ջարդվում են նոյն Թիւրքերից, որոնց ունգարացիները այդքան համակրում էին։ Այս իրողութիւնները դիւրագրգիռ ունգարացիներին կատաղութեան են հասցրել և նրանք ամեն կերպ աշխատում են բոլոր մեղաւորութիւնը բարդել իրանց համար ատելի սլավեանների վրա։

«Իսկապէս ունգարացիները առիթ չունեն նեղանալու, որովհետև պատահած անաջողութիւնների պատճառը ոչ իրանք են և ոչ գեներալ Սապարի, այլ պատերազմական մինիստրը, որ 6000 զինուոր ուղարկեց մի այնպիսի տեղ, ուր պէտք է ուղարկէր գոնէ 15000 մարդ։ Այսպիսով բոլոր մեղաւորութիւնը ինում է պատերազմական մինիստրի վրա, որի պարտականութիւնն էր պահանջել կայսրից աւելի շատ զօրք պատրաստել և ուղարկել, բայց եթէ հաւատանք տարածված լուրերին պատերազմական մինիստրն էլ կարդարանայ, որովհետև կոմս Անդրաշի, որի կարծիքը մինիստրների խորհուրդների մէջ մեծ կշիռ ունի, պնդել է, որ գեներալ Սապարիի համար մինչև անգամ 6000 մարդն էլ շատ է, որովհետև Բոսնիա և Հերցեգովինա կարելի է գրաւել առանց արիւնհեղութեան։

«Մինիստրների վերջին նիստերի ժամանակ վճռվեցաւ կազմակերպել բոլոր զօրքերը և նրանց ուղարկել Բօսնիա և Հերցեգովինա, որտեղ նրանք կը ճնշեն ապստամբութիւնը, կը գրաւեն այդ նահանգները և մի և նոյն ժամանակ կը վախեցնեն Թիւրքիային, կը ցոյց տան այդ երկրիմի պետութեանը, որ նրան կը ճնշեն, եթէ շարունակէ երկմտի գործել։

«Վիէննայի դիպլոմատիական շրջաններում հաւատացած են, որ Աւստրիան գրաւում է Բօսնիա և Հերցեգովինա ոչ թէ ժամանակաւորապէս, այլ այդ նահանգները միացնում է իր հետ»։

ՍԵՐԲԻԱ

—

Օգոստոսի 22-ին Սերբիայում տօնվեցաւ այդ իշխանութեան անկախութիւն ստանալու և իշխան Միլանի ծննդեան օրը։ Դեռ տօնի նախընթաց երեկոյեան քաղաքը լուսաւորված էր, երաժշտութիւն էր ածվում և ժողովուրդի խումբեր գնում էին պալատը իշխանին շնորհաւորելու համար։

Լուսադէմին ամրոցի մէջ սկսեցին թնդանօթներ արձակել։ Վաղ առաւօտից փողոցների մէջ մեծ շարժողութիւն էր նկատվում։ Քաղաքը զարդարված էր կարմիր, սպիտակ և կապուտ դոյներ ունեցող դրօշակներով։ Բոլորը ուրախ և ոգևորված էին։ Մայր եկեղեցում միտրօպոլիտ Միխայիլը պատարագ էր մատուցանում, որին ներկայ էին իշխան Միլան, իշխանուհի Նատալիա, բոլոր մինիստրները, զօրքեր, բազմաթիւ պատգամաւորներ և ժողովուրդը։ Մետրոպոլիտը մի աղու ճառ կարդաց, որի մէջ յիշելով Սերբիայի ունեցած պատերազմը Թիւրքիայի հետ, շնորհակալութիւն յայտնեց սլավեան եղբայրներին, որոնք համակրութեամբ վերաբերվեցին դէպի Սերբիայի վեմ գործը։ Իշխանը մի հրովարտակով հրատարակեց Սերբիայի անկախութիւնը, սահմանների ընդարձակելը և խաղաղութեան հաստատվելը։

Պատարագից յետոյ իշխանը ընդունեց մինիստրներին և գլխաւոր պաշտօնեաներին։ Սերբիայի հետ նոր միացած երկիրների պատգամաւորները ներկայացան իշխանին և շնորհակալութիւն յայտնեցին իրան ազատութեան համար։

Երեկոյեան քաղաքը նախկին օրվայ պէս լուսաւորված էր, երաժշտութիւն էր ածում և տիրում էր ընդհանուր ուրախութիւն։ Ազգասէր ժողովուրդը հիացմամբ ընդունում էր փողոցներում իշխանին, մինիստրներին և զօրքերին։ Զեխիայից և այլ սլաւեանների բազմաթիւ երկիրներից շնորհաւորութեան հեռագիրներ ստացվեցան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Փարիզից լրագիրներին հաղորդել էին, որ շուտով մինիստրութիւնը պէտք է փոխվէր։ Հավասի հեռագրական ընկերութիւնը այդ լուրը հերքում է և հաղորդում է, որ պօլիցիան արգելեց բանուորների սօցիալական կօնգրէսի կազմելը։ Լրագիրներից մի քանիսը բողոքում են այս կարգադրութեան դէմ և յոյս ունեն, որ այնու ամենայնիւ կօնգրէսը կը կայանայ։

—Լրագիրներին հեռագրում են, որ Բ. Դուռը պնդում է, որ Աւստրիան կատարէ նրա պահանջների դիսաւոր կէտերը։ Կոմս Անդրաշի համոզում է Ֆրանց-Իոսեֆ կայսրին համաձայնել այդ պահանջներին, բայց կայսրը գտնում է, որ աւելի լաւ է վէճը պատերազմով վերջացնել։ Այս հարցը քննվեցաւ օգոստոսի 13-ին կայացած աւստրօ-ունգարական մինիստրների խորհուրդում։

—Վիէննայից հեռագրում են, որ գեներալ Սապարիի զօրքերը օգոստոսի 23-ին ենթարկվեցին ապստամբների յարձակմանը Դօբոյ մօտ, որտեղ գտնվում էին Սապարիի ամրացած դիրքերը։ Աւստրիական զօրքերը մեծ կորուստներ ունեցան։ Սերաեվօ քաղաքը նուաճելուց յետոյ ապստամբութիւնը հիւսիսա-արևելեան Բօսնիայում աւելի զարգացել է։

—Վիէննայից հեռագրում են, որ այնտեղից իւրաքանչիւր օր երկաթուղով նոր զօրքեր և թնդանօթներ են ուղարկվում Բօսնիա։ Այս նահանգից ստացված լուրերի համեմատ ապստամբները խումբերով հաւաքվում են Գրաչանիցայում, Գօրնէյում և Դօլնի Տուզլում։ Ապստամբները ստանում են պատուական զէնքեր, պատերազմական պաշարներ և մինչև անգամ թնդանօթներ։ Վիէննայում ամենքը համոզված են, որ այդ զէնքերը ապստամբներին բաժանվում են Թիւրքաց կառավարութեան գաղտնի հրամանով։ Մասնաւոր լուրերից երևում է, որ անգլիական դեսպան պ. Լայարդ գործ է դնում իր բոլոր ազդեցութիւնը Բ. Դրան վրա, համոզելով նրան ընդդիմանալ Աւստրիայի գործողութիւններին, նոյնպէս Ռուսաստանի և Ցունաստանի դիտաւորութիւններին։ Այդ ճանապարհով Անգլիայի ներկայացուցիչը կամենում է ստանալ յայտնի զիջումներ յօգուտ իր հայրենիքի։ Շատ հիմնաւոր է այն կարծիքը, որ եթէ Աւստրիան պատերազմ յայտնէ Թիւրքիային, սուլթանը բոլորովին կենթարկվի պ. Լայարդի ազդեցութեանը։

—Լրագիրները հաղորդում են, որ իբրև թէ Անգլիան սկսում է փոշմանվել, որ սեփականացրել է իրան Կիպրոս կղզին։ Ասում են որ այդ կղզին բոլորովին յարմար չէ վաճառականութեան կէտ լինել և կլիմայի կողմից էլ շատ անառողջ է։ Մի գերմանական լրագիր ասում է որ գուցէ շատ ժամանակ չի անցնի, և Անգլիան կամաւոր կերպով ստիպված կը լինի յետ դարձնել Թիւրքիային իր գրաւված կղզին։

—Ամբողջ Ֆրանսիայում հաւաքված են այս րօպէիս ընդհանուր խորհրդներ (նահանգական ժողովներ), որոնց նիստերը չուտով սկսվելու են։ Այդ ժողովների պարապմունքների առարկան սահմանափակվում է միմիայն նահանգական, այսինքն դեպարտամենտների տեղական խնդիրներով, ուրեմն ոչինչ քաղաքական նշանակութիւն չունեն, բացի բիւրօի (կարգադրող յանձնաժողովի) ընտրութենից։

—Էրզրումից «Голосъ» լրագրին հեռագրումեն օգոստոսի 15-ից, որ այնտեղ վերջին օրերը սաստիկ չոքեր են լինում։

—Գերմանական լրագիրները, ինչպէս օրինակ «Gegenwart» շաբաթաթերթը սաստիկ քննադատում են իշխան Բիսմարկի այժմեան քաղաքականութիւնը գերմանական ներքին հարցերի վերաբերութեամբ։ Գերմանական ազատամիտ մամուլը շատ վտանգաւոր է համարում իշխան Բիսմարկի բռնած այժմեան ընթացքը, տեսնելով որ պարլամենտի մէջ մեծամասնութիւն ունենալու համար նա մօտենում է այն կուսակցութեանը, կղերականներին, որոնց դէմ նա այդքան տարի անխնայ պատերազմում էր։

—Հայազգի Նուբար-փաշային Եգիպտոսի խեդիվը յանձնել է կազմել մի նոր մինիստրութիւն, ինչպէս երևում է Եգիպտոսում դիտաւորութիւն կայ մտցնել մեծ վերանորոգութիւններ։

—Մարոկոի կայսրը, ինչպէս հաղորդում է «Բէյտերի ընկերութիւնը» սաստիկ հիւանդացել է, անյայտ չարագործներից թունաւորված լինելով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 22 օգոստոսի (3 սեպտեմբերի)։ Աչքի առաջ ունելով Աւստրիայի նկատողութիւնը, որ սուլթանի բարձրագոյն իշխանութեան ճանաչելը Բօսնիայի աւստրիական զօրքերով գրաւումը ժամանակաւոր բնաւորութիւն կը տար, Բ. Դուռը հրաժարվեց դաշնագրի մի մասնաւոր յօդուածի տպելուց, որի զօրութեամբ աւստրիական զօրքերի Բօսնիայի գրաւելը ժամանակաւոր համարվէր։ Զը նայելով Բ. Դրան կողմից այդ արած զիջողութեան, Աւստրիան յետ է գցում գործի վիճակը և պնդում է որ իր զօրքերի ունեցած աջողութիւնների պատճառով նա յաջորդաբար է վարվում յետ առնելով իր արած զիջողութիւնները։ Ֆրանսիան խորհուրդ է տալիս Բ. Դրան համաձայնութիւն կապել Ցունաստանի հետ, դորանով ակնարկելով որ հակառակութեան պատահած ժամանակ ծովի կողմից յարձակումն անհնարին կը լինի։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինձ յանձնված լինելով ԱԳՈՒԼԻՍԻ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ վարձել, խնդրում եմ ցանկացողներին պայմանների մասին խօսելու դիմել «ՄՇԱԿԻ» խմբագրատանը. իսկ օտարաքաղաքացիք կարող են իրանց ցանկութիւնը յայտնել նամակով: Ինչ յարմար համարվածներին չեմ պատասխանվի:

Ե. Մէլիք-Յակոբեանց

Օգոստոսի կէսից լոյս կը տեսնեն Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆԻ հետևեալ նոր աշխատասիրութիւնները՝

1) ԸՆԹԵՐՑԱՐԱՆ հայերէն լեզուի «ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻ ԱՇԽԱՐՀ, երրորդ տարվայ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՒ ԸՆԹԵՐՑՄՈՒՆՔ» անունով.

2) «ՀԱՄԱՌՕՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ.»

Ցանկացողները ստանալ յիշեալ գրքերը իր ժամանակին կարող են դիմել «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ» կամ Զաք. Գրիգորեանի գրավաճառանոցը:

3—3

Շուտով լոյս կը տեսնի «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար. I մասն. աշխատասիրութիւն Զախարովի և Պաուլսոնի եղանակով. Բագրատայ Միրիմանեանց:

Կը ծախվի Զ. Գրիգորեանցի գրախանութում:

«ՃՈՐՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»

Գուստավ Քալանթարեանցինը, ռուսերէն լեզուով, ծախվում է Բերենշտամի գրավաճառանոցում, Թիֆլիսում, Գօլովինսկի պրոսպեկտի վրա: Գինն է 75 կոպ. փոստի ծախսով 80 կոպէկ:

4—6

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄ)

Վաճառվում են հետևեալ նոր հրատարակութիւնները.

1. Նախակրթանք հայերէն գրաբար լեզուի, աշխատ. Գ. Արք. Ալվազեան, չորրորդ տիպ, ճոխագոյն քան առաջինները: Գինն է 40 կոպէկ:

2. Սկզբունք Քրիստոնէական հաւատոյ Հայաստանեաց եկեղեցւոյ. համառօտ դասագիրք սրբազան պատմութեան և քրիստոնէական վարդապետութեան ծխական—տարրական ուսումնարանների համար, բազմաթիւ գեղեցիկ պատկերներով զարդարված, աշխատասիրութիւն Ստեփաննոս քահ. Տէր-Ստեփանեան: Գինն է 50 կ.:

Վերոյիշեալ գրքերն ընդունված են իբրև դասագիրք Թիֆլիսի թեմի պ. թեմական վերատեսչից. Վաճառվում են բացառապէս կենտրօնական գրավաճառանոցում: Գումարով և կանխիկ դրամով գնողներին նշանաւոր զիջումն է լինում:

3. Մամուլի տակից դուրս եկաւ և այս օրերս կը սկսուի վաճառուիլ պ. Ղազարոս Աղայեանի «Ռուսումն մայրենի լեզուի» անունով դասագրքի երրորդ տպագրութիւնը, տպագրված ամենապատուական թղթի վրա: Գինն է 15 կ.:

Նոր տպագրութիւնը վաճառվելու է միմիայն կենտրօնական գրավաճառանոցում: Պատուէրներ ընդունվում են:

ՄՈԶԴՈԿԻ ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐՈՒՄ հարկաւոր են մի ՈՒՍՈՒՑԻՉ հայոց լեզուի և մի ՎԱՐԺՈՒՀԻ: Նոյն տեղի ՔԱՂԱՔԱՑԻՆ երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի ուսուցիչ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ տարեկան 600 րուբլ ռոճիկով, շաբաթական 17 դաս: Ցանկացողները կարող են մանրամասն պայմանները իմանալ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՑՈՒՄ:

Գաբրիէլ քահանայ Տուրփայեան

4—4

«Тифл. Объяв.» լրագրի գրասենեակը տեղափոխված է Դվորցովոյ փողոցի վրա, ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԷՐԷՈՒՄԸ:

1—2

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՌԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԱՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ:

Կովկասի ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ յայտնում է հետևեալ: ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ մտնել ցանկացողները պէտք է խնդիրք ներկայացնեն բժշկական մասի կառավարչի անունով (Սապերնայա փողոց, իշխան Անդրէնիկովի տուն):

Մանկաբարձական արհեստի բարձր կուրսեր մտնելու համար, որ իրաւունք է տալիս ստանալ մանկաբարձի վկայական և մտնել պետական ծառայութիւն իբրև քաղաքական և գաւառական մանկաբարձներ, որ տալիս է բժշկական կանոնադրութեան յօդ. 541 մէջ յիշված արտօնութիւնները, պահանջվում է գիտենալ. ռուսաց լեզուից ուղիղ կարդալ և գրել պատմել գրաւոր և բերանացի կարդացածը, թուաբանութենից չորս գործողութիւնները (գումարումն, հանումն, բազմապատկումն, և բաժանումն), անուական թուեր և հասկացողութիւն կոտորակներից: Իսկ նրանցից, որոնք կը ցանկանան մտնել ստորին կուրսերը, որոնք աւարտելուց յետոյ կը ստանան գիւղական մանկաբարձների վկայականներ, պահանջվում է ռուսերէնից կարդալ և գրել և բերանացի պատմել կարդացածը:

Ինչպէս առաջինները նոյնպէս և վերջինները պէտք է 16 տարեկանից փոքր և 30 տարեկանից մեծ չը լինեն:

Խնդիրքի հետ պէտք է լինեն մետրիկական և ծնողների կամ ամուսնի (եթէ մտնողը ամուսնացած է) թոյլատուութեան վկայականները:

Թոշակադրամը հետևեալն է. երթևեկ աշակերտուհիներից տարեկան 40 րուբլ իսկ գիշերօթիկներից, որոնց բոլոր հոգսերը ուսումնարանը կը տանի, 240 րուբլ և միանուագ 60 րուբլ սկզբնական ծախսերի համար:

Տարեկան թոշակադրամը մտցնում է սկզբից և չէ վերադարձնվում, եթէ որ և է պատճառով աշակերտուհին ուսումնական տարվայ ընթացքում թողնէ ուսումնարանը:

Ուսման կուրսը երկու տարվայ է:

Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ:

3—6

ՄԱՐԻԱՄԵԱՆ ՑՈՎՆԱՆԵԱՆ օրիորդաց ուսումնարանում ուսումը սկսում է Սեպտեմբերի 2-ին, իսկ աշակերտուհի ընդունելը օգոստոսի 20-ին: Անցեալ տարվանից բացուած են երեք պատրաստական և մէկ առաջին. այս տարի բացվում է երկրորդ դասատունը: Պրոգրամի և աշակերտուհի ընդունելու մանրամասն պայմանների մասին կարելի է տեղեկութիւն ստանալ ուսումնարանի տեսչից:

1—3

Ամենակարճ միջոցում դուրս կը գայ տպագրութենից երեք, այն է՝ ռուսերէն, ֆրանսիերէն և հայերէն լեզուներով մեր՝ «Կովկասի հիմիկվան լրագիրներ» անունով բրոշիւրը: Դրա տպագրութեան համար բաց արինք յատկապէս Տէր-Յովհաննիսեան կանդիտերսկում, որ գտնվում է «Լօնդօն» հիւրանոցի կարգում, կամաւոր ստորագրութիւն:

Գրիգոր Տէր-Մելքիսեդեկեանց

1—3

ՕԳՈՍՏՈՍԻ 25. ՏԵՂԵԿԱՑՈՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Օգոստոսի 24-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	—
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1540	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1278	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 267—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	9	32
Վենայի կուրսը ածէ 112 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	101	—
Շաքարը բրօցկու . .	7	40
„ միւս տեսակը.	7	25
„ չաքարաւազը .	5	70
„ տրանզիտը. .	6	—
„ մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	20
Միւս տեսակը հին սերմից.	7	—
Բուրդը թուշի . . .	8	—
„ թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	80
„ Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	42	—
Ֆրիզոնը (լաստը) Աղուլեաց	50	—
Կոֆէն մօկօի. . . .	25	—
„ լիվանի . . .	20	—
„ մարաքինկօյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ. Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 րուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 րուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 րուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Ա. Անով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ. .	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիօն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4 8
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիսէի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	Կօպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրօպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը:

Երկուշաբթի. Վէրմիչէվ և Գօրալևվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւնների ձեռագիտական մասը 10-ից մինչև 11 ժամ:

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բակտ վենեբական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէտնով աչքի հ.:

Չորեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Բակտ կրծքային և ջղային հ.:

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ. Բակտ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, Կ. Բախուտով կանանց և ջղային հ.:

Ուրբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան:

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ. Պէտնով աչքի հիւանդութիւններ:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Ա. Ա. Ստացանք նամակը, տպագրելու մասին կը մտածենք:

—ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ Մ. Մ. Շատ լաւ կանէք, եթէ առանձին նամակով պատմէք: Ցոյս ունենք ձեզ դիցուհիք չեն յափշտակի:

—ՀԻՆ-ԲԱՅԱԶԷԹ. Մ. Տ. Պ. Ստացանք վերջին նամակը: Լաւ միջոցի էք դիմել. շարունակեցէք նոյնութեամբ գործել:

—ԹԻՖԼԻՍ. Կ. Լ. Այդպիսի յօդուած ձեր ցոյց տուած լրագրի մէջ չը կայ: Գուցէ սխալվում էք, լուրը հետաքրքիր է:

—ԷՋՄԻԱԾԻՆ. Ր. Վ. Մ. Ձեր բանաստեղծութիւնը յիշեցնում է Երևանի նահանգում գործածված սայլերին: Խնայեցէք մեր ջղերը և միւս անգամ ձեր սրտի զգացմունքը մեզ մի յայտնէք: Աղօթքի մէջ մխիթարութիւն փնտռեցէք:

Дозволено Цензурою 24 Августа 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ